միացան երկրի բնակիչներից ընտիր ռազմիկներ։ Թշնամին բարձրացաւ քաղաքի պարսպի վերայ, նորա մէջ ծակեց եւ մտաւ քաղաքը. Դուինի ժողովուրդը[1] եւ զօրքը արիաբար ճակատեցան թշնամու հետ, այնպէս որ մուսլիմները յաղթեցին, իսկ յոյները դուրս ելան քաղաքից, կորցնելով մօտ տաս հազար մարդ։

316 թ. Դումուստուք բազմաթիւ յոյն զօրքով արշաւեց Հայաստան եւ պաշարեց Խլաթ, որի բնակիչք խաղաղութիւն հաստատեցին նորա հետ։ Մեկնելով քաղաքից նա հեռացրեց ջամից ամբիոնը[2] եւ նորա փոխարէն խաչ կանգնեցրեց։ Արդնի եւ այլ քաղաքների (մուսլիմ) ժողովուրդը ահաբեկ թողեց իւր բնակատեղերը եւ գաղթեց Բաղդադ՝ օգնութիւն խնդրելով ամիրապետից. սակայն նա մնաց առանց օգնութեան։

Նոյն (= 316) թուին Մալաթիա եկան 700 յոյն եւ հայ (վարպետներ) տապարներով եւ բրիչներով (զինուած), գործ պտրելու պատրուակով. բայց յետոյ յայտնի եղաւ, որ Մալիհ[3] հայը (Տորոսի) լեռանցքի[4] պետը՝ նոցա տեղ տուեց քաղաքում մնալու համար։ Երբ Դումուստուք Մալաթիա պաշարեց, նոքա յանձնեցին քաղաքը նորան։ Իմանալով այս բանի մասին՝ բնակիչք կոտորեցին նոցա եւ խլեցին նոցա ինչքը։

319 թ. Իբն Դիրանի[5] եւ յոյն Հայաստանի գաւառների այլ հայ (իշխանք) միմեանց հետ թըղ-

---

1 Իմա՛ մուսլիմ բնակիչք՝ ի բաց առնելով հայերին։

2 Մէնբար, մահմեդական աղօթատան ամբիոնը։

3 Մլեհ?

4 Բնագրի դարուբ دروب ենթադրելու է Տորոս լեռների pylae armeniacae կոչուած անցքը։ Նոյնն յիշում է հեղինակը նախադոյն եւս գիրք Ը. էջ 122։

5 Դերանիկ կամ Դերենիկ, որդի Աշոտի իշխանաց իշխանի. հմմտ. Թովմա Արծրունի ՊՏԱ։